Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թ.
մարտի 22-ի նիստի N 11
արձանագրային որոշման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 95 –րդ կետի:

2. Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների օգտագործման կառավարումը հանդիսանում է բնապահպանական կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

3. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը, ոչ միայն կարևոր նախապայման է մարդու և բնության ներդաշնակ գոյակցության, այլև երաշխիք երկրի կայուն զարգացման համար, ինչն ամրագրված է Հայստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 12-րդ հոդվածով,
այն է՝ «*Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:*»:

4. Շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչները (մթնոլորտ, ջուր, հող, ընդերք, բուսական և կենդանական աշխարհ, ինչպես նաև դրանց առնչությամբ ձևավորվող միջավայրերը) որպես ամբողջականություն, պետք է լինեն պետության ներսում կայացվող որոշումների (տնտեսական, քաղաքաշինական, սոցիալական, մշակութային և այլն) առանցքում:

5. Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրների լուծման և միջազգային հնարավորությունների արդյունավետ իրացման համար կարևորվում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության, վերականգնման և ողջամիտ օգտագործման պետական կառավարման միասնական համակարգի ձևավորումը՝ բնապահպանական, սոցիալական և տնտեսական հիմնահարցերի համակցված և համակարգված գործողությունների միջոցով:

6. Բնապահպանական իրավիճակի արմատական փոփոխությունները երկրում հնարավոր է միայն ակտիվ բնապահպանական քաղաքականության իրականացման միջոցով, որն ենթադրում է բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կառավարման տարբեր մակարդակներում նպատակների հասանելիություն ապահովող միջոցառումների ամբողջական համակարգի առկայություն:

II. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

7. Թեպետ Հայաստանի Հանրապետությունն ընդունել է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների յուրաքանչյուր բաղադրիչի արդյունավետ պահպանությունն ու օգտագործումը և երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովող բազմաթիվ օրենքներ ու իրավական այլ ակտեր, այնուամենայնիվ գործող օրենսդրական հենքի կատարելագործման խնդիրն արդիական է, քանի որ այն չի ապահովում բնապահպանության ոլորտի այնպիսի գործընթացների կարգավորումը, ինչպիսին են շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանն ու կայուն օգտագործմանն ուղղված համալիր պլանավորման, բնական ռեսուրսների միասնական մոնիթորինգի իրականացման, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ հաշվառման ու կադաստրների վարման, միասնական տեղեկատվական համակարգերի կառավարման ու շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների բոլոր բաղադրիչները միմյանց հետ շաղկապված վիճակի գնահատման գործընթացները:

8. Շրջակա միջավայրիև բնական ռեսուրսների պահպանության և օգտագործման հիմնախնդիրների լուծումը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով ռազմավարական բնապահպանական գործողությունների ծրագիրը պետք է նախատեսի բնապահպանական քաղաքականության գործիքների համակարգված փաթեթ, որպեսզի նվազեցնի շրջակա բնական միջավայրի վրա ճնշումը: Տվյալ Ռազմավարությունը պետք է առավել համակարգված դարձնի բնապահպանական և բնօգտագործման ոլորտում առկա և առաջիկա բնագավառային գործողությունների ծրագրերը, պետք է անդրադառնա ինչպես հայտնի, այնպես էլ նոր բացահայտված խնդիրների լուծմանը, ինչպես նաև հաշվի առնի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները՝ բնապահպանության ոլորտում:

9. Սույն Ռազմավարությունում մանրամասն դիտարկվել են շրջակա միջավայրի բաղադրիչներ հանդիսացող հողերը, կենսաբազմազանությունը, ներառյալ՝ անտառները և բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ-ներ), ջրային ռեսուրսները, մթնոլորտը, իսկ ընդերքում պարփակված օգտակար հանածո հանդիսացող բնական ռեսուրսների մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի նիստի 21-րդ կետով ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը, համաձայն որի նախատեսված հիմնախնդիրների լուծման համար պետք է իրականացվի ախտորոշիչ ուսումնասիրություններ ինչի հիման վրա կմշակվի ռազմավարական փաստաթուղթ՝ ներառելով ոլորտի կայուն զարգացման համար խոչընդոտ հանդիսացող խնդիրների լուծման մանրամասն ուղղությունները, ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտի

բարեփոխումներին ուղղված միջոցառումները, ֆինանսական գնահատականները և ակնկալվող արդյունքները:

10. **Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները ներկայացված են ըստ բաղադրիչների: Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման նպատակն՝** ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվո,ղ ծառայությունների որակի բարձրացում վարչարարության պարզեցումը, կայուն զարգացման սկզբունքների ներդրումը շրջակա միջավայրի պահպանության բոլոր ոլորտներում և դրանց համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումները՝ հակասությունների և կրկնությունների վերացնելու մասով:

III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

III (1). Հողեր

11. Հայաստանի Հանրապետության տարածքի հողերը կազմում են ընդամենը 2.974.259հա: Երկրի աշխարհագրական դիրքը, երկրաբանական բարդ կառուցվածքը և խիստ արտահայտված բարձունքային գոտիականությունը, ինչպես նաև բուսական տարբեր նահանգների սահմանագծում գտնվելը հանգեցրել է հողերի 14 ծագումնաբանական տիպերի ձևավորմանը:

12. Հայաստանի Հանրապետության հողերի առկայության և ըստ նպատակային նշանակության բաշխման վերաբերյալ (2010-2016թթ.-ի կտրվածքով) Համառոտ տեղեկությունները կցված են (Աղյուսակ 1):

13.Հողային հարաբերությունների պետական կարգավորումը նպատակաուղղված է համալիր և կայուն օգտագործման, էկոհամակարգային կառավարման սկզբունքների վրա հիմնված հողերի տնօրինման, տիրապետման և օգտագործման քաղաքականությունների ու ռազմավարությունների մշակմանն ու իրականացմանը:

14.Հայաստանի Հանրապետությունում հողերի կառավարման ոլորտում իրավական ու ինստիտուցիոնալ շրջանակները կարգավորվեցին 2001 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, որի ընդունումից հետո հողային հարաբերությունների շրջանակը հստակեցվեց նաև Հայաստանի Հանրապետության անտառային և Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքերով, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով: Տնտեսության տարբեր ոլորտներում (գյուղատնտեսություն, ընդերքօգտագործում, հիդրոէներգետիկա և այլն) հողերի օգտագործման և պահպանության բնագավառների հասարակական հարաբերությունների կարգավորման նպատակով մշակվեցին մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնք նպատակաուղղված են շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, հողերի վրա մարդածին ազդեցության վերացմանը կամ նվազեցմանը:

15.Հողերի կառավարման ելակետային հիմնադրույթներից է հողի բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակության կարևորումը, ինչի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման: Հողի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:

16.Որպես գլոբալ էկոլոգիական հիմնախնդիր՝ շրջակա միջավայրում ընթացող անցանկալի գործընթացների ու դրանց հետևանքների ամբողջության մեջ դիտարկվում է հողի դեգրադացիան և որպես դրա եզրափակիչ փուլ՝ անապատացումը, որի հետևանքով նվազում կամ վերանում է տվյալ տարածքի կենսաբանական կարողությունը: Այդ է պատճառը, որ անապատացման դեմ պայքարն ընդգրկում է ոչ միայն բնական էկոհամակարգերի, դրանց բաղադրիչների և բնական ռեսուրսների պահպանության ու օգտագործման աշխատանքների արդյունավետ կազմակերպումը, այլև շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտմանը նպաստող այնպիսի գործոնների ազդեցության մեղմացմանն ուղղված ջանքերը, ինչպիսիք են սոցիալական և տնտեսական գործոնները:

17.Ներկայումս Հայաստանի Հանրապետության հողերի որակի վատթարացման, աղտոտման և դեգրադացման գործընթացները կանխելու, հողերի վրա բացասական ազդեցությունները նվազեցնելու նպատակով՝ հողերի կայուն կառավարման համատեքստում մշակվող և իրականացվող ծրագրերն անդրադառնում են հետևյալ հարցերի լուծմանը.

1) հողերի բերրիության, ինչպես նաև հողի այլ օգտակար հատկությունների պահպանությունը.

2) խախտված հողերի վերականգնումը, դրանք տնտեսական շրջանառության մեջ ներառումը.

3) հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, սողանքներից, անապատացումից, հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանությունը.

4) հողօգտագործողների կողմից հողերի ողջամիտ օգտագործումը,

5) հողերի օգտագործման նկատմամբ հատուկ կարգավորման դրույթների սահմանումը և դրանց ուղղված միջոցառումների իրականացումը:

18.Հայաստանի Հանրապետության հողերի կայուն կառավարման հիմնախնդիրների լուծումը սերտորեն փոխկապակցված է բնական ռեսուրսների ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացման հետ:

19.Առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրներից են.

1) Հողերի որակի միասնական մոնիթորինգի համակարգի բացակայություն: Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվում է հողերի աղտոտման դիպվածական մոնիթորինգ՝ տարբեր կարգավիճակ ունեցող (պետական և մասնավոր հավատարմագրված լաբորատորիաներ, գիտահետազոտական կենտրոններ) կազմակերպությունների կողմից, ոչ կանոնակարգված, տարբեր մեթոդներով, ինչի

պատճառով ստացված տեղեկությունները հաճախ համադրելի չեն: Բացակայում է մոնիտորինգի ցուցանիշերի հավաքագրման և վերամշակման համակարգված գործընթացը, հողերի վատթարացմանը հանգեցնող ազդեցություններից դիտարկվում է միայն քիմիական աղտոտումը:

2) Բացակայում են հողերի վրա տարբեր տեսակի բնական և տեխնածին ճնշումների դրսևորման արդյունքում առաջացած բացասական ազդեցությունների գնահատման ընդհանրացված չափանիշները և դրանց գնահատման սա1) նդղակները:

3) Հողերի որակի և էկոլոգիական ծանրաբեռնվածության թեմատիկ քարտեզների բացակայություն: Նման թեմատիկ տեղեկատվական հենքի առկայությունը հնարավորություն կտա կատարելագործել տնտեսական գործունեության բնապահպանական կառավարման մեխանիզմը, ապահովելով հողերի արդյունավետ և ողջամիտ յուրացումը:

4) Հողօգտագործման բնագավառում տեխնոլոգիամետ և գիտելիքահենք մեթոդների սահմանափակ կիրառում: Այս խնդիրը հատկապես օրհասական է գյուղատնտեսական գործունեության և ընդերքօգտագործման ոլորտներում, որտեղ կարևորվում է գյուղատնտեսական հողերի բարելավման, անասնապահության իրականացման, արդյունաբերական նպատակներով տրամադրված հողատարածքների վերականգնման մեթոդների արդիականացումը՝ հակաէրոզիոն ագրոտեխնիկական և ֆիտոմելիորատիվ միջոցառումների ներդրումը, հողերի հումուսային ֆոնդի և բերրիության պահպանության նպատակով օրգանական պարարտանյութերի օգտագործումը, արածեցման նորմավորումը, հողերի ռեկուլտիվացիայի կենսաբանական մեթոդների մշակումը, երկրատեղեկատվական տեխնոլոգիաների կիրառելիության ընդլայնումը:

5) Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների (պոչամբարներ, լցակույտեր) առկայություն, դրանցում կուտակված թափոնների մեծ ծավալներ, որոնք զբաղեցնում են զգալի տարածություններ և հանդիսանում են բնական միջավայրի երկարատև աղտոտման աղբյուրներ:

20. Վերլուծելով հողերի կառավարման և պահպանության ոլորտի իրավական դաշտի ներկա վիճակը կարելի է նշել մասնավորապես հետևյալ հիմնախնդիրները՝

1)սոցիալ-տնտեսական զարգացումներում հողերի կառավարման խնդիրների ինտեգրման (կանաչ էկոնոմիկա, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրման խթանում և այլն) նպատակով՝ ամբողջական իրավական դաշտի բացակայությունը,

2) ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի (այդ թվում՝ լքված և տիրազուրկ հանքավայրերի տարածքում) կենսաբանական վերականգնման և տնտեսական յուրացման նպատակով բարելավման միջոցառումների իրականացման մեթոդական հիմքերի, ուղեցույցերի բացակայություն:

21. հողերի արդյունավետ կառավարման նպատակով հողերի վիճակի մոնիթորինգ իրականացնող պետական մարմինների միջև համագործակցության բացակայություն,

տեղեկատվության ստացման, հավաքագրման և փոխանակման գործընթացի համակարգման խնդիր,

22. հողերի օգտագործման և պահպանության արդյունավետ մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական և տնտեսական գործիքների փաստացի բացակայություն,

23. Հայաստանի Հանրապետության հողերի տեխնածին աղտոտվածության ուսումնասիրության մոնիթորինգային ցանցի, հողերի վիճակի պարբերական և համակարգված մոնիթորինգի գործընթացի բացակայություն,

24. օգտակար բաղադրիչների կորզման արդյունավետության բարձրացման և առաջացող թափոնների ծավալների նվազեցման խնդրի առկայություն, լեռնահարստացուցիչ ֆաբրիկաների լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման և կիրառման բացակայություն,

25. ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի (այդ թվում՝ լքված և տիրազուրկ հանքավայրերի տարածքներում) նպատակային վերականգնման ապահովման ծրագրերի բացակայություն, ընդերքգօգտագործողների կողմից խախտված տարածքների միայն լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի իրականացում, ինչը չի ապահովում տնտեսական շրջանառություն վերականգնված հողերի վերադարձը,

26. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի կառավարման շրջանակներում՝ ռեկուլտիվացիոն ֆոնդում կուտակված գումարների օգտագործման նոր մեխանիզմների բացակայություն,

27. լքված, տիրազուրկ, կոնսերվացված հանքավայրերի և պոչամբարների տարածքներում բնապահպանական ռիսկերի ուսումնասիրության, գնահատման և բացասական ազդեցությունների նվազեցման ծրագրերի բացակայություն,

28. Արարատյան դաշտում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզի գյուղատնտեսական հողերի բնական և երկրորդային աղակալման պրոցեսների վերահսկողության, ստորերկյա ջրերի բարձր մակարդակով պայմանավորված բացասական ազդեցությունների կանխարգելման և չեզոքացման միջոցառումների բացակայություն,

29. արտաքին երկրաբանական գործընթացների (սողանքների) հետևանքով հողերի էռոզիայի կանխման համակարգված միջոցառումների և ֆինանսավորման բացակայություն,

30. հիդրոէլեկտրակայանների շահագործման արդյունքում ափամերձ բուսականության դեգրադացման հետևանքով հողերի էռոզիայի ակտիվացման գործընթացների ուսումնասիրության և կանխարգելման միջոցառումների բացակայություն,

31. անտառհատումների արդյունքում հողերում էրոզիոն գործոնների ակտիվացման կանխարգելման համակարգված միջոցառումների բացակայություն:

III (2). Կենսաբազմազանություն

32. Կենսաբանական բազմազանության պահպանությունը մարդկային քաղաքակրթության գոյության առաջնային պայման է համարվում: Այն ապահովում է կյանքի հարատևումը և սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացումը: Կենսաբազմազանությունը մեծ դեր ունի էկոհամակարգերի ծառայությունների (այսուհետ՝ ԷԾ) քանակական և որակական հատկանիշների պահպանման գործում, հատկապես՝ գենոֆոնդի պահպանության, սելեկցիայի, դեղամիջոցների ստացման և կենսատեխնոլոգիաների միջոցով նոր նյութերի արտադրման համար:

33. Կենսաբազմազանության տեսակային կազմի առատությանը նպաստում է Հայաստանի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհների ձևավորման կարևոր մարզերի հանգուցակետում գտնվելու, ինչպես նաև միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ հանդիսանալու հանգամանքը: Հայաստանի տարածքը տեսակառաջացման ակտիվ վայր է: Միայն վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի տարածքում նկարագրվել է գիտության համար 50-ից ավելի նոր տեսակներ:

34. Երկրի ոչ մեծ տարածքում աճում են շուրջ 3800 տեսակ անոթավոր բույսեր, 428՝ հողային և ջրային ջրիմուռներ, 399՝ մամուռներ, շուրջ 4500 սնկեր, 464՝ քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակ անողնաշար կենդանիներ: Բարձր է կենսաբազմազանությունն էնդեմիզմը՝ մոտ 500 կենդանատեսակ (ֆաունայի շուրջ 3 %-ը) և 144 բուսատեսակ (ֆլորայի 3,8%-ը) համարվում են Հայաստանի էնդեմիկներ: Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված են 452 տեսակ, որը կազմում է ամբողջ ֆլորայի 11,89 %: Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված են 308 տեսակ՝ 155 անողնաշար և 153 ողնաշարավոր: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000 քառ. կմ տարածքում աճում է մոտ 107 տեսակ:

35.Կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանության և կայուն օգտագործման միջոցով կենսաբազմազանության կորստի և բնական միջավայրերի դեգրադացման կանխարգելումը բնական ռեսուրսների ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում միասնական պետական քաղաքականության նպատակներից է: Դրանք են՝

1) կենսաբազմազանությանն առընչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության և կառավարման համակարգի բարելավումը.

2) կենսաբազմազանության կորուստի հիմնական պատճառների դեմ պայքարի իրականացում և բնակչության իրազեկության բարձրացում.

3) կենսաբազմազանության վրա ուղղակի ծանրաբեռնվածության կրճատում և կայուն օգտագործման խթանում.

4) կենսաբազմազանության վիճակի բարելավում՝ պահպանելով էկոհամակարգերի, տեսակների և գենետիկական բազմազանությունը, վերականգնելով խախտված բնակմիջավայրերը.

5) կենսաբազմազանության և ԷԾ-ների ապահովմամբ մարդկանց օգուտների ծավալի մեծացում.

6) գիտելիքների կառավարման և ներուժի ստեղծման շնորհիվ կենսաբազմազանության պահպանության և օգտագործման արդյունավետության բարձրացում:

III (3). Անտառ

36.Հայաստանի անտառածածկի մակերեսը կազմում է 332.333 հա կամ երկրի ընդհանուր տարածքի մոտ 11.17 %-ը (համաձայն 2011 թվականի GIZ-ի կողմից հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների):

37.Հայաստանի անտառները կառավարվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից:

1)«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվում են 13 անտառային բնույթի արգելավայրեր, որոնցում ներկայումս անհրաժեշտ է իրականացնել սահմանների ճշգրտում և կառավարման պլանների մշակում: Մյուս ԲՀՊՏ-ներում գերակշռում են անտառածածկ տարածքները:

2)Կայուն անտառօգտագործումը անտառների, անտառային պաշարների և անտառային հողերի օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու հնարավորության օգտագործումն է, որը չի հանգեցնում անտառային ռեսուրսների, դրանց պոտենցիալի կամ բնակության վայրերի կամ աճելավայրերի կարգավիճակի երակարաժամկետ նվազեցմանը կամ սպառմանը:

3)Շատ մեծ է անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայությունների ու բարիքների ծավալը և քանակը: Անտառային էկոհամակարգերի վրա մարդածին ազդեցության հետևանքով (անտառների գերշահագործում, անկանոն հատումներ, արածեցում, խոտհունձ, հողազավթումներ և այլ) կրճատվում են անտառային տարածքները, տեղի են ունենում տեսակային կազմի փոփոխություններ, բնական վերականգնման ունակության և դրանց արտադրողականության անկում:

4)Սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով մեծ է անտառհատումների ծավալը, որը գերազանցում է անտառի բնական վերականգնման ծավալները: Դրան նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը: Վերջին ժամանակներս երկրում գազամատակարարման համակարգի զարգացմամբ պայմանավորված նկատվում է ապօրինի ծառահատումների ծավալների որոշակի նվազում: Ապօրինի անտառհատումների կանխարգելման խնդրում որոշ դրական ազդեցություն է ունեցել 2011թ. ՀՀ կառավարության N1535-Ն որոշումը, համաձայն որի անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքներին թույլատրվում է

սեփական միջոցներով մթերել և անվճար ձեռք բերել մինչև 8 խմ թափուկ վառելափայտ: Այնուամենայնիվ, Հայաստանին բնորոշ սակավանտառածածկի պայմաններում անտառազրկումն էական սպառնալիք է, որը կործանարար հետևանքներ կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև եկամուտների նշանակալի կորստի պատճառ դառնալ՝ երկարաժամկետ ազդեցության ընթացքում ԷԾ-ների ծավալների և քանակների կրճատման պարագաներում:

5)Անտառային զանգվածների հատված տեղամասերում և դրանց հարող տարածքներում նկատվում է էկոհամակարգերի անկայունություն՝ ավելացել են հողմատապալ կամ ձնատապալ անտառային տարածքները, հողատարման, ձորակ առաջացման, սողանքների, էրոզիոն-սելավային պրոցեսների ակտիվացման, աղբյուրների չորացման, փոշու ամպերի գոյացման և այլ երեույթներ, որոնք վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին:

6)Որպես անտառային էկոհամակարգերի որակական հատկանիշների փոփոխման հետևանք կարող են դիտվել վնասատուների (հատկապես տերևակերմիջատների) զանգվածային համաճարակները, ինչը պահանջում է անտառ պաշտպանական հրատապ աշխատանքների իրականացում: Հարկ է նշել, որ վերոհիշյալ աշխատանքների մեծամասամբ իրականացվում է ավիացիոն քիմիական պայքարի միջոցով, ինչը շատ դեպքերում կործանարար է անտառային որոշ կենդանատեսակների գոյության համար:

7)Անտառային հրդեհների առաջացման հիմնական պատճառը հարակից տարածքների գյուղատնտեսական հողատեսքերի այրումն է, որոնց դեմ պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացմանը խոչընդոտում են բարդ ռելիեֆը, անտառային ճանապարհային ցանցի անմխիթար վիճակը, հրդեհների մարման համապատասխան տեխնիկական սարքավորումների բացակայությունը և այլն:

9)Ինչպես հայտնի է՝ անտառային էկոհամակարգերի դեգրադացման աստիճանի գնահատման համար չափանիշներ են հանդիսանում հրդեհից մասնակիորեն կամ ամբողջովին ոչնչացված, վնասատուների և հիվանդությունների պատճառով բնական դիմադրողականությունը կորցրած, չորացող կամ արդեն չորացած անտառը, բնական վերաճի ընդունակությունից զուրկ, հիմնովին ծառահատված անտառային տարածքները, էրոզացված մեծ մակերեսի վրա տեղակայված նոսրուտները:

10)Նշված գրեթե բոլոր չափանիշները բնութագրում են Հայաստանի անտառային էկոհամակարգերի ներկա վիճակը, որի շտկումը պահանջում է երկարաժամկետ, հետևողական, բազմակողմանի, կշռադատված և ֆինանսատար աշխատանքների ճիշտ պլանավորում ու իրականացում:

11)Անտառների կայուն օգտագործման կազմակերպումը կարող է հանդիսանալ ռացուցիչ եկամուտների աղբյուր, միևնույն ժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով հարակից համայնքների բնակչության զբաղվածության և կենսամակարդակի բարձրացման գործում:

III (4). Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)

38.Հայաստանի ԲՀՊՏ-ների ճնշող մեծամասնությունում բացակայում են լիարժեք տվյալներ կենսաբազմազանության վերաբերյալ: Կենսառեսուրսների հաշվառումը, գույքագրումը և մոնիտորինգը դեռևս բավարար ծավալով չեն իրականացվում, որը բացառում է կենսաբազմազանության վրա մարդածին և բնական գործոնների ազդեցության իրական

գնահատումը, պատճառած վնասի հուսալի հաշվառումը և ամենակարևորը՝ հստակ տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացումը:

39.ԲՀՊՏ-ների կառավարման առանձնահատկությունների վերլուծությունն ի հայտ է բերել հետևյալ հիմնական թույլ կողմերը (հիմք՝ ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N1059-Ա որոշում)՝

1) ԲՀՊՏ-ների կառավարման մեխանիզմների անկատարությունը,

2) ԲՀՊՏ-ների համակարգի տեխնիկական, մարդկային և ֆինանսական հզորությունների սակավությունը,

3) ԲՀՊՏ-ներում գիտական աշխատանքների և մոնիտորինգի ոչ լիարժեք համակարգի առկայությունը,

4) ԲՀՊՏ-ներում տվյալների հավաքագրման/կադաստրի վարման ոչ լիարժեք համակարգի առկայությունը,

5) ԲՀՊՏ-ների կառավարման պլանների թերի իրականացումը,

6) ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող ՊՈԱԿ-ների թերությունները:

40. Կենսաբազմազանության ոլորտի գլխավոր խնդիրներն են.

1)Տարածքների իրացվածության աստիճանի անհամաչափություն: Հայաստանի Հանրապետության տարածքի 44 %-ը բարձր լեռնային է: Ինտենսիվ իրացված գոտիները կազմում են Հայաստանի Հանրապետության տարածքի 18.2 %-ը, որտեղ կենտրոնացված է բնակչության 87.7 %-ը, որի խտությունը այստեղ մի քանի անգամ գերազանցում է խտության էկոլոգիական շեմային չափանիշը (200 մարդ/կմ2)՝ հասնելով 480-558 մարդ/կմ2: Թույլ իրացված գոտիները կազմում են տարածքի 38.0 %-ը, որտեղ բնակվում է բնակչության ընդամենը 12.3 %-ը և բնակչության խտությունը շատ ցածր է՝ 11-20 մարդ/կմ2,

2)Գերօգտագործում և բնակմիջավայրի կորուստ: Գերօգտագործման հետևանքով տեղի է ունենում վայրի կենսաբազմազանությամբ զբաղեցված տարածքների կրճատում, աղտոտում, առանձին տեսակների բնակմիջավայրերի կորուստ, էկոհամակարգային ծառայությունների փոփոխություն: Բնակմիջավայրի կորստի պայմանավորված է նաև բաց եղանակով հանքարդյունահանմամբ, շինարարության ծավալմամբ, գյուղատնտեսական գործունեությամբ, անտառահատումներով, հիդրոէներգետիկայի զարգացմամբ, ռեկրեացիայի և զբոսաշրջության զարգացմամբ,

3)Էկոհամակարգային ծառայությունների փոփոխություն: Պայմանավորված է ԷԾ-ների վրա կենսաբազմազանության հետ կապված փոփոխությունների ազդեցությամբ և դրա սոցիալ-տնտեսական ու մշակութային հետևանքներով:

4)Կենսաբազմազանության դերի և էկոհամակարգային ծառայությունների արժեքի թերագնահատում: Մինչ այժմ մեր երկրում բնական ռեսուրսների կառավարման հետ կապված պահանջները ամբողջական տեսքով ճյուղային քաղաքականություններում ներառված չեն: Դրա հիմնական պատճառը բնական էկոհամակարգերի ապահովող ծառայությունների գնահատման և դրանց հաշվարկված դրամային արժեքի բացակայությունն է:

5)Կենսաբազմազանությանն առընչվող օրենսդրության և կառավարման համակարգի բարելավում:

6)Կենդանական և բուսական աշխարհի մոտիթորինգի բացակայություն և այլն:

III (5). Ջրային ռեսուրսներ

41. Ջուրը բնության պարգև է, որը եղել է և մնում է անփոխարինելի բնական ռեսուրս առանց որի մարդկությունը գոյություն ունենալ չի կարող: Թեպետ ջրային ռեսուրսները համարվում են վերականգնվող ռեսուրսներ, սակայն այս ոլորտի պահպանության, օգտագործման և կառավարման խնդիրները և հարցերը համարվում է ողջ երկրագնդի ամենասուր հիմնախնդիրներից մեկը, հատկապես քաղցրահամ ջրերի խնդիրը: Ջուրը Հայաստանի Հանրապետության համար կարևորագույն բնական ռեսուրս է և ազգային հարստություն:

42. Ջուրն ունի տնտեսական, սոցիալական և բնապահպանական արժեք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ջրային ռեսուրսները հանդիսանում են պետական բացառիկ սեփականություն և դրանց տնօրինումը, տիրապետումը և օգտագործումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

43. Բնական ջրային ռեսուրսներից ամենանշանավորն է Սևանա լիճն է:

44. **Մակերևութային ջրային ռեսուրսներ:** Գետեր: Հայաստանի տարածքում ձևավորվում է ամբողջ գետային հոսքի ավելի քան 80%-ը (չհաշված Սևանա լճի ավազանը): Մակերևութային հոսքի մնացած մասը կազմում է անդրսահմանային գետերի՝ Արաքսի և Ախուրյանի տարանցիկ հոսքը:

45.Հայաստանում հաշվառվում է 9479 գետ և գետակ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 23 հազ. կմ:

46.Հանրապետության գետերը հանդիսանում են Հարավային Կովկասի խոշոր գետերի՝ Արաքսի և Կուրի վտակները: Այդ գետերի միջին հոսանքների ջրհավաք ավազանների ջրբաժան գիծը հանրապետության տարածքը բաժանում է երկու անհավասար մասերի. Արաքսի՝ 22556 կմ2 (տարածքի մոտ 76 %) և Կուրի՝ 7185 կմ2 (տարածքի մոտ 24 %) ավազանների միջև:

47. Լճեր: Մեծությամբ և տնտեսական օգտագործման տեսանկյունից հանրապետությունում առանձնացվում են Սևանա և Արփի լճերը: Բացի նշված լճերից կան հարյուրից ավելի փոքր լճեր, որոնց մեծ մասը տարվա չոր եղանակներին չորանում են:
48.Սևանա լիճըունի հանրապետական և տարածաշրջանային բացառիկ նշանակություն: Սևանը Կովկասի ամենամեծ լիճն է և բարձրալեռնային քաղցրահամ մեծ լճերից մեկը աշխարհում: Լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900.49 մ բարձրության վրա:

49. 2017թ. հունվարի դրությամբ լճի ծավալը կազմում է 38.13 կմ^3, իսկ հայելու մակերեսը 1278.12 կմ^2, մակարդակը՝ 1900,46 մ:

50.Լիճ են թափվում նրա ջրհավաք ավազանում առաջացող 28 գետեր ու գետակներ, և միայն Հրազդան գետն է սկիզբ առնում լճից:

51.Արփի լիճը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի գոգավորության արևմտյան մասում՝ ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա: 1951 թ.

պատվարվել է և վերածվել Արփի լիճ-ջրամբարի: Մինչև ջրամբարի վերածվելը մակերեսը 4,5 կմ² էր, խորությունը՝ 1,6 մետր, ջրիծավալը՝ 5 մլն մ³: Այժմ լիճ-ջրամբարի մակերեսը՝ 20 կմ², ամենամեծ խորությունը՝ 8 մ, ջրի առավելագույնծավալը՝ 105 մլնմ3:ԱրփիիցսկիզբէառնումԱխուրյանգետը:

52. **Ստորերկրյա ջրային ռեսուրսներ.** Հայաստանի Հանրապետության ստորերկրյա ջրային ռեսուրսները կազմում են ընդհանուր ջրային ռեսուրսների առավել կարևոր բաղադրիչը: Դրանք ներառում են բնական ջրերի բազմամյա օգտագործման բոլոր տեսակները՝ խմելու, կենցաղային, ոռոգման, հանքային և ունեն բացառիկ նշանակություն հանրապետության համար:

53.Հայաստանում ստորերկրյա ջրերը հիմնականում ձևավորվում են Արարատյան, Սևանի, Գյումրիի, Լոռու, Վերին Ախուրյանի, Փամբակի, Որոտանի միջլեռնային գոգավորություններում և իջվածքներում:

54.Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի ինչպես բնական ռեսուրսները, այնպես էլ շահագործական ռեսուրսները վերջին անգամ հաշվարկվել, գնահատվել և հաստատվել են Պաշարների Պետական Հանձնաժողովի կողմից 1984թ-ին: Հորատանցքերի ծախսերով վերականգնվող պաշարը հաստատված է 51,7 /վրկ կամ 1630,7 մլնմ3/տարի: Ստորերկրյա ջրային ռեսուրսների վերջին ուսումնասիրություններն իրականացվել են Արարատյան դաշտում 2016թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին: Ուսումնասիրությունների համաձայն Արարատյան դաշտում առկա է 2807 հորատանցք, որից շահագործվում են 1795-ը: Շահագործվող հորատանցքերից 680-ը շատրվանում են՝ 31596,3 լ/վրկ ջրաքանակով, իսկ պոմպերով շահագործվում են 1115՝ 32387,3 լ/վրկ ծախսով՝ ըստ պոմպերի արտադրողականության:

55. Ջրամբարներ: Հայաստանում առկա են ավելի քան 80 ջրամբար, ավելի քան 1,2 մլրդ մ3 գումարային օգտակար ծավալով: Խոշոր ջրամբարներն են Ախուրյանի ջրամբարները ՝ 525 մլն մ3 և Սպանդարյանինը՝ 257 մլն մ3:

56.Համաձայն ջրի ազգային ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ջրային ռեսուրսները գնահատվում են ըստ հետևյալ բաղադրիչների՝ օգտագործելի ջրային ռեսուրսներ, ռազմավարական և ազգային ջրային պաշարների:

57.Ստորև ներկայացված են Հայաստանի Հանրապետության տարածքի ջրային հաշվեկշռի տարրերի բաշխումն՝ ըստ 14 խոշոր գետային ավազանների և օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական ջրային պաշարը և ազգային ջրային պաշարն՝ ըստ ջրավազանային կառավարման տարածքների՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 29-ի N549-Ն որոշման:

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՏԱՐԱԾՔԻՋՐԱՅԻՆՀԱՇՎԵԿՇՌԻՏԱՐՐԵՐԻԲԱՇԽՈՒՄՆԸՍՏ 14 ԽՈՇՈՐԳԵՏԱՅԻՆԱՎԱԶԱՆՆԵՐԻ

NN ը/կ	Գետային ավազանը	Մակերեսը (կմ^2)	Գետային հոսքը (մլնմ^3/տարի)	Մթնոլորտային տեղումները (մլնմ^3/տարի)	Գոլորշացումը (մլնմ^3/տարի)
1.	Դեբեդ	3895	1203	2726	1457
2.	Աղստև	2480	445	1569	979
3.	Քուռ գետ իփոքր վտակներ իավազան	810	199	510	354
4.	Ախուրյան (Հայաստանի Հանրապետության տարածքում)	2784	391	1653	972
5.	Քասախ	1480	329	979	486
6.	Մեծամոր	2240	711	858	641
7.	Հրազդան	2565	733	1572	876
8.	Սևանա լճի ավազան (լճի ակտիվ ջրատվություն)	4750	265	2675	2153
9.	Ազատ	952	232	607	306
10.	Վեդի	998	110	573	340
11.	Արփա	2306	764	1643	768
12.	Որոտան	2476	725	1828	811

13.	Ողջի	1341	502	1097	448
14.	Մեղրի	664	166	470	241

ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆ ԸՍՏ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

NN ը/կ	Ավազանային կառավարման տարածքը	Մակերեսը (կմ^2)	Օգտագործելի ջրային ռեսուրսները (մլնմ^3)	Ռազմավարական ջրային պաշարը (մլնմ^3)	Ազգային ջրային պաշարը (մլնմ^3)
1.	Հյուսիսային	7185	1897	59,2	63,3
2.	Ախուրյան	5024	1602	564,0	608,2
3.	Սևան-Հրազդան	8790	2801	729,3	34837,7
4.	Արարատյան	4256	1306	229,0	245,3
5.	Հարավային	4481	1443	90,5	101,1
	Ընդամենը	29736	9049	1672	35855,6

58. **Ջրային ռեսուրսների կառավարման ներկա իրավիճակ.** Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման բարեփոխումները սկսվել են 1999-2000թթ. Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագրի» մշակումից, որի շրջանակներում գնահատվել են Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսները, առաջարկվել են կառավարման կառուցվածքային բարեփոխումների ծրագիր, ինչպես նաև ձևավորվել է ջրերի առաջարկի և պահանջարկի կառավարման ուրվագծերը: Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հետ՝ առաջարկվել է նաև ջրավազանային կառավարման կառավարման գաղափարը՝ ջրային ռեսուրսների տարեկան և հեռանկարային պլանավորման մեխանիզմների ներդրմամբ:

59. 2002 թ.-ից վեր ջրային ռեսուրսների կառավարումն իրականացվում է հետևյալ օրենսդրական և ինստիտուցիոնալ գործիքների գործածությամբ՝

<u>Օրենսդրական</u>

1)Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք,

2) «Ջրի ազգային ծրագրի մասին» և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ,

<u>Ինստիտուցիոնալ</u>

3) ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման տարբեր մարմիններ,

4) ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում՝ հիմք ընդունելով համապարփակ կառավարման սկզբունքները,

5) ջրային ռեսուրսների կառավարման ապակենտրոնացված կառավարում՝ Ջրավազանային տարածքային կառավարման բաժինների միջոցով,

6) ջրային պետական կադաստրի տվյալների բազա:

60.Ներկայումս ջրային ոլորտի բարեփոխումները գտնվում են անցումային ամենակարևոր փուլում, ինչը կապված է ջրային ռեսուրսների կառավարման գործառույթների ապակենտրոնացման հետ: Այս առումով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ ջրի որակի նորմերի, էկոլոգիական թողքի գնահատման, բնագավառում արդի տեխնոլոգիաների ներդրման և ջրավազանային կառավարման պլանների մշակման վերաբերյալ:

61.Յուրաքանչյուր երկրի համար ջրային ռեսուրսների արդյունավետ և համակարգված կառավարումը կարևորագույն հիմնախնդիրներից է:
Ջրային ռեսուրսների արդյունավետ և համակարգված կառավարում ասելով պետք է հասկանալ ջրային ռեսուրսների այնպիսի տնօրինում, տիրապետում և օգտագործում, երբ հասարակության տեսանկյունից ապահովվում են տնտեսական և ֆինանսական արդյունավետության, սոցիալական արդարության, շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման սկզբունքները:

62.Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է սահմանել ջրային ռեսուրսների կառավարման **նպատակները՝**

1) տնային տնտեսությունների, գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ հատվածներում ջրի բավարար քանակությամբ և համապատասխան որակով մատակարարումն օգտագործողների,

2) խմելու ջրի օգտագործման մատչելիության ապահովումը տնային տնտեսությունների համար,

3) ջրերի խնայողության ապահովում՝ մատակարարման և օգտագործման ժամանակ,

4) ջրերի մաքրումը բնակչության, գյուղատնտեսության և արդյունաբերության արտանետումներից,

5) քաղցրահամ ջրերի մատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների մատուցման մենաշնորհ դիրքի չարաշահումների կանխարգելում,

6) համայնքների պաշտպանությունը ջրհեղեղներից և հեղեղված հողերի ցամաքեցումը,

7) ջրային ռեսուրսների ստորգետնյա և մակերևութային ջրահոսքերի բնական վերականգնման հնարավորությունների պահպանությունը,

8) բոլոր քաղցրահամ և ափամերձ ջրային տարածքներում կենդանական տարատեսակների և բնական միջավայրի պահպանությունը,

9) ջրի հետ կապված միջազգային հակասությունների նվազեցումը և վերացումը (բացառումը),

10) նշված նպատակների իրագործմանն ուղղված կառավարության ծախսերի արդյունավետ իրականացման ապահովում:

63. Որպես ջրային ռեսուրսների կառավարման **խնդիրներ**, կարելի է խնդիրները տարանջատել ըստ նպատակային օգտագործման

Խմելու-կենցաղային

1) Ջրակորուստներ կրճատում

2) Ջրաղբյուրների և կապտաժների սանիտարական գոտիների պատշաճ պահպանում,

3) Ջրամատակարար օպերատորի կողմից չսպասարկվող, առանց ջրօգտագործման թույլտվության ջրառ իրականացնող համայնքները ընդգրկում ջրամատակարարման կառավարման օպերատորի համակարգում,

4) Ոռոգման շրջանիավարտին ՋՕԸ-երի կողմից համայնքներին հանձնվող հորատանցքերի համար վերջիններիս կողմից խմելու-կենցաղային կարիքներով շահագործման նպատակով ջրօգտագործման թույլտվության ստացում:

Գյուղատնտեսական

1) Ջրակորուստներ կրճատում,

2) Ոռոգմանարդի (ջրախնայողևէներգախնայող) տեխնոլոգիաների ներդնում,

3)Ոռոգման մայր, միջտնտեսային և ներտնտեսային ջրանցքներում ջրի հաշվառման արդի համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքի մշակում,

4)Կոլեկտորադրենաժայինցանցիպահպանումևշահագործում, գրունտայինջրերիմակարդակներիևորակիորոշում,

5)Մինչև ոռոգման սեզոնի սկսվելը, ոռոգման օգտագործվող հորատանցքերի վրա չափիչ սարքերի տեղադրում և կապարակնքում:

Ձկնաբուծական

1) Կիսափակ ջրամատակարարման համակարգի ներդնում,
2) Ջրախնայող և էներգախնայող տեխնոլոգիաների ներդնում՝ խրախուսման մեխանիզմների կիրառման միջոցով,
3) Ձկնաբուծական տնտեսություններում ավտոմատ կառավարման կենտրոնացված առցանց համակարգի ներդնում,
4) Երկրորդային ջրօգտագործման համակարգի ներդնում՝ խրախուսման մեխանիզմների կիրառման միջոցով:

Էներգետիկ

1) Ջրառի կետում էկոլոգիական թողքի ավտոմատ առցանց համակարգի ներդնում,
2) Միջազգային ստանդարտներին համապատասխան ճկնուղիների կառուցում,

Արդյունաբերական

1) Լոկալ մաքրման կայանների ներդնում:

64.Հանրապետության կարևորագույն խնդիրներից է համայնքներում կեղտաջրերի մաքրման կայանների վիճակը կամ դրանց ի սպառ բացակայությունը: Գործող կեղտաջրերի մաքրման կայաններում իրականացվում է միայն մեխանիկական մաքրում, սակայն անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել մեխանիկական մաքրումից անցում կատարելու կենսաբանական մաքրման:

III (6). Մթնոլորտային օդի պահպանություն

65. Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի պահպանությունը իրականացվում է 1994թ. ընդունված «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունը սահմանափակող և դրանք հաշվառող երկու կարևոր որոշումների՝ համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. ապրիլի 22-ի N259:

66. 2016 թվականի ցուցանիշներով ավտոտրանսպորտի արտանետումները հանրապետությունում կազմել են ընդհանուր արտանետումների՝ 52%, իսկ Երևանում՝ 76% (փորձագիտական գնահատմամբ ըստ Երևան քաղաքում հաշվառված տրանսպորտային միջոցների քանակի): Ներկայումս համաձայնեցման ընթացքում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որի նպատակն է արգելել հին (առնվազն Եվրո-3 էկոլոգիական չափանիշներին չհամապատասխանող) ավտոմեքենաների ներմուծումը հանրապետության տարածք, ինչը կնպաստի մթնոլորտային օդի աղտոտվածության կանխարգելմանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին:

67.2013 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշման մեջ վնասակար նյութերի արտանետումների նորմավորման /սահմանափակման/ գործընթացի բարելավման և անորոշությունների վերացման նպատակով ընդգրկվեցին մի շարք վնասակար նյութերի նորմատիվներ:

68.Մշակվել և 2016 թվականի դեկտեմբերի 15-ի Հայաստանի Հանրապետության կառավարության նիստին հավանության է արժանացել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության նոր խմբագրությամբ օրենքի նախագծի հայեցակարգը: Հայեցակարգը իրավական հենք է հանդիսանում մթնոլորտային օդի պահպանության ժամանակակից գործընթացների ձևավորման համար: Նոր խմբագրությամբ օրենքում կամրագրվեն աշխարհում ընդունված և ներկայումս երկրում գործող օդի որակի գնահատման չափանիշների ներդաշնակեցման, ինչպես նաև արտանետումների սահմանափակման նպատակով զարգացած երկրներում լայնորեն կիրառվող «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրման դրույթները: Այս ամենը ոչ միայն ավելի արդյունավետ կդարձնեն մթնոլորտային օդի պահպանության կառավարումը, այլ նաև կնպաստեն միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարմանը:

69. Մշակվել և կառավարության կողմից հաստատվել են օզոնային շերտը քայքայող նյութերի Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ընդհանուր չափաքանակները՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համապատասխան: ԵԱՏՄ-ին անդամակցման հետ կապված լրամշակվել են օզոնաքայքայիչ նյութերի գործածումը կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ:
70. Մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ.-ի սեպտեմբերի 10-ի N41 արձանագրային որոշմամբ հավանությանն է արժանացել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի Հանրապետության ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը», որը սահմանված կարգով ներկայացվել է կոնվենցիայի քարտուղարությանը:

71. Մթնոլորտի պահպանության ոլորտում առավել կարևոր միջազգային պայմանագրեր են ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիան իր Կիոտոյի արձանագրությամբ և Փարիզյան համաձայնագրով, «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիան իր «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությամբ և դրա ուղղումներով և ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիան: Այս պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. դեկտեմբերի 8-ի նիստի N 49 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը»: Այդ պատճառով տվյալ ռազմավարության

շրջանակներում միջազգային պարտավորությունների հետ կապված խնդիրները և դրանց հետ կապված գործողությունները չեն դիտարկվում:

72. Վնասակար նյութերի արտանետումների աղբյուրները բաժանվում են 2 խմբի՝ աղտոտման անշարժ (կայանքներ, սարքավորումներ) և շարժական աղբյուրներ (ավտոտրանսպորտ, այլ փոխադրամիջոցներ):

73. Աղտոտման անշարժ և շարժական աղտոտման աղբյուրներից արտանետումների կանխարգելման կամ նվազեցման գործընթացները տարբերվում են: Անշարժ աղբյուրների արտանետումների սահմանափակումն իրականացվում է էկոլոգիական սկզբունքով, իսկ շարժական աղբյուրներից արտանետումների սահմանափակումը հիմնվում է շարժիչի և վառելիքի որակի վրա:

74. *Աղտոտման անշարժ աղբյուրների* արտանետումները պետական հաշվառման ենթակայության տեսակետից դասակարգվում են ըստ դրանց տարեկան արտանետումների հիման վրա հաշվարկված օդի պահանջվող օգտագործման (ՕՊՕ) ցուցանիշի, որի ստորին շեմի համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված է 200մլն.խոր.մ ցուցանիշը:
75. Ներկայումս արտանետումների պետական հաշվառման և նորմավորման ոլորտում ընդգրկված են մոտ 1500 (1483) կազմակերպություն՝ արտանետման ավելի քան 3850 աղբյուրներով: Դրանք ընդգրկում են հանրապետությունում անշարժ աղբյուրներից կատարվող արտանետումների ավելի քան 90%-ը, և դրանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է պետական վերահսկողություն ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից:

76. Աղտոտման **անշարժ աղբյուրների մասով** հիմնական խնդիրը արտանետումների սահմանափակման/նորմավորման սկզբունքն է:

77. Հայաստանում ընդունված և մինչ այսօր գործող նորմավորումը էկոլոգիական է, որի հիմնական գաղափարը հետևյալն է՝ յուրաքանչյուր աղտոտման աղբյուրից արտանետվող վնասակար նյութը պետք է լինի այնքան, որ ցրման անբարենպաստ պայմաններում գետնամերձ շերտում ստեղծի այնպիսի կոնցենտրացիա, որ այն, գումարվելով նույն նյութի ֆոնային կոնցենտրացիային, չգերազանցի այդ նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան:

78. Աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող խոշոր կազմակերպությունները՝ յուրաքանչյուր աղտոտման աղբյուրից արտանետման չափը որոշելու նպատակով, մշակում են սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ, որը

սահմանված կարգով ներկայացվում է քննության Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

79. Նախագիծը սովորաբար պարունակում է տեղեկատվություն արտանետումների աղտոտման աղբյուրների պարամետրերի, արտանետվող նյութերի անվանումների և հնարավոր առավելագույն արտանետման չափերի մասին: Այս տվյալների հիման վրա կատարվում է ցրման հաշվարկ՝ արտանետումների ցրվելուց հետո գետնամերձ շերտում առաջացող կոնցենտրացիան պարզելու նպատակով: Եթե նախագծում ներկայացված տվյալները ընդունվում են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից, ձեռնարկությանը տրվում է արտանետման սահմանային չափաքանակներ/ արտանետման թույլտվություններ:

80. Վարչարարությունը և կոռուպցիոն ռիսկերը պակասեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշմամբ աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպություններն արտանետման չափաքանակները սահմանելու տեսակետից դասակարգվել են հետևյալ կերպ՝ 200-ից մինչև 2մլրդ. խոր.մ ՕՊՕ-ի դեպքում արտանետման չափաքանակները սահմանվում են ըստ փաստացի արտանետումների, իսկ 2մլրդ.խոր.մ –ից ավելի ՕՊՕ ունեցող արտանետման աղբյուրների համար արտանետման չափաքանակները սահմանվում են սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նախագծերի հիման վրա:

81. Նույն որոշմամբ «տրամադրված արտանետման չափաքանակները մնում են ուժի մեջ, քանի դեռ աղտոտման անշարժ աղբյուրների և աղտոտող նյութերի մասով քանակական կամ որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև տվյալ նյութերով ֆոնային գերնորմատիվային աղտոտվածություն չի առաջացել:»

82. Սակայն արտանետումների սահմանափակման այսպիսի մոտեցումը չի նպաստում նոր, բնապահպանական տեսակետից ավելի մաքուր տեխնոլոգիաների ներդրմանը: Բացի նրանից, որ հաշվարկը հաշվի է առնում միայն արտանետման աղբյուրի և արտանետվող գազային խառնուրդի ելային տվյալները և որևէ կապ չունի արտադրական պրոցեսների կամ արտադրողականության հետ (քանի որ հաշվի է առնվում արտադրողական հզորությունը միայն, գ/վրկ), գործող օրենսդրությունը թույլ է տալիս փաստորեն մեծացնել խողովակի բարձրությունը և ցրման հաշվարկում ապահովել գետնամերձ կոնցենտրացիան միայն այդ միջոցառումով:

83. Հայաստանում դեռևս չեն գործում ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) համակարգերը և չկա բնապահպանական խնդիրների նկատմամբ «բարի կամքի» մոտեցում: Թերի է նաև իրազեկումն այս ոլորտում: Հետևապես, եթե փաստացի արտանետման չափերը բավարարում են արտանետման

չափաքանակներ/թույլտվություններ ստանալու համար, ձեռնարկությունները որևէ լուրջ քայլեր կամ ներդրումներ չեն ձեռնարկում իրենց տեխնոլոգիաները փոխարինելու համար:

84. Մինչդեռ միայն նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ կարելի է սահմանափակել վնասակար նյութերի արտանետումները և միևնույն ժամանակ զարգացնել երկրի տնտեսությունը:

85. ***Անշարժ աղբյուրների համար տեխնոլոգիական նորմավորման սկզբունքի ներդրումը, որը լայնորեն կիրառվում է զարգացած երկրներում, հանդիսանում է մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության կարևորագույն խնդիր:***

86. Արտանետումների սահմանափակումը տեխնոլոգիաների միջոցով նշանակում է սահմանափակել/նորմավորել արտանետումը մեկ միավոր արտադրանքի համար:
87. Այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ արդեն իրականացվում են: Մասնավորապես, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվել են փոփոխություններ. հիմնական հասկացությունների հոդվածը լրացվել է «լավագույն հասանելի տեխնոլոգիա» *և «տեխնիկական նորմատիվ» հասկացություններով:* 2013-2014թթ. լավագույն հասանելի տեխնոլոգիաների եվրոպական տեղեկատու փաստաթղթերի հիման վրա մշակվել և տեղայնացվել են Հայաստանի համար տեղեկատու փաստաթղթեր ցեմենտի արտադրության, վառելիքի այրման խոշոր կայանքներում և գունավոր մետաղների արտադրության համար: Սակայն այս ամենը նոր սկզբունքի ներդրման ճանապարհի առաջին քայլերն են միայն:

88.**Աղտոտման շարժական աղբյուրներ.** Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոմեքենաները բավականին մաշված են: 2016թ. դրությամբ՝ պաշտոնական տվյալների համաձայն, Հայաստանի Հանրապետությունում գրանցված են 558540 տրանսպորտային միջոցներ, այդ թվում մինչև 2002թ. արտադրված մեքենաները կազմում են 400029 միավոր, կամ 71,6 %:

89.Միևնույն ժամանակ տարեց տարի ավելանում է սեղմված բնական գազի օգտագործումն՝ ի հաշիվ բենզինի օգտագործման պակասեցման, որի արդյունքում զգալիորեն զսպվում է վնասակար արտանետումների աճն ավտոտրանսպորտից: Մոտավոր հաշվարկներով, բենզին օգտագործելուց, նույն մեքենայի արտանետումների ընդհանուր ծավալը 2,9-ից մինչև 3,1 անգամ ավելի է, քան գազի օգտագործման դեպքում:

90.Բացի շարժիչի և վառելիքի տեսակներից և որակից մթնոլորտային օդի պահպանության առումով աղտոտման շարժական աղբյուրների արտանետումների նվազեցմանը կարող են նպաստել ***ավտոմեքենաների պահպանման և վերահսկման համակարգը, ավտոմեքենաների պահանջարկի կառավարումը, երթևեկության կազմակերպումը, հասարակական տրանսպորտի, հատկապես էլեկտրատրանսպորտի***

և հեպիոպն - հեծանվային երթևեկության զարգացումը, որոնք որ կապարելագործման և բարելավման կարիք ունեն: Այս խնդիրների լուծման ուղին պետական կառավարման համապատասխան լիազոր մարմինների հետ հետևողական աշխատանքն է՝ առկա բացերն աստիճանաբար լրացնելու ուղղությամբ:

91.ԵԱՏՄ-ին անդամակցելը կարող է բարոյապես և ֆիզիկապես մաշված մեքենաների Հայաստան ներմուծելու նոր ալիք առաջացնել, քանի որ Ռուսաստանի Դաշնությունը խստացնում է ավտոտրանսպորտի և ավտոտրանսպորտի վառելիքի նկատմամբ սահմանափումկները, մասնավորապես 2016թ. հունվարի 1-ից եվրո-3 ստանդարտի վառելիքի օգտագործումը արգելվել է: Եվրամիությունում եվրո-3 2005թ, փոխարինվել էր եվրո-4, իսկ 2009թ.-ից գործում է եվրո-5-ը:
92.Ներկայումս մշակվել և համաձայնեցման փուլում է գտնվում համապատասխան կառավարության որոշում, համաձայն որի 2018թ.-ից սկսած եվրո-3 էկոլոգիական չափանիշներին չհամապատասխանող ավտոմեքենաների մուտքը երկիր կարգելվի:

93.Արտանետումների հաշվառման համակարգ: Մթնոլորտի պահպանությանն ուղղված նպատակային և ճշգրիտ հասցեագրված միջոցառումների ծրագրման և իրականացման, ինչպես նաև Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը պատշաճ մակարդակով ապահովելու համար անհրաժեշտ է կատարելագործել արտանետումների հաշվառման համակարգը:
94.Անշարժ աղբյուրներից արտանետումների հաշվառման մասով ներկայիս խնդիրն է վնասակար նյութերի արտանետումների որոշման ազգային մեթոդական բազայի և արտանետումների հաշվառման բնագավառում էլեկտրոնային կառավարման մեխանիզմի բացակայությունն, ինչպես նաև վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների հաշվառումն միասնական համակարգով իրականացնելու հնարավորությունը:

95.Շարժական աղբյուրներից արտանետումների հաշվառման հիմնախնդիր է արտանետումների հաշվառման ժամանակակից ծրագրային փաթեթների կիրառման համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը: Մասնավորապես, տրանսպորտային միջոցների քանակներն՝ ըստ ԵՄ – ում ընդունված դասակարգման, նրանց տարեկան վազքն՝ ըստ ճանապարհների տեսակների և երթևեկության ռեժիմների, ըստ վառելիքի տեսակների, եթևեկության միջին արագության և այլն:

IV. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

96.Ռազմավարության հիմնական նպատակն է ստեղծել պայմաններ շրջակա միջավայրի պահպանության, վերականգնման, բարելավման համար, ինչպես նաև ապահովել անցումը կայուն զարգացման՝ ներկա և ապագա սերունդների պահանջմունքների ապահովման համար: Մասնավորապես.

1) Շրջակա միջավայրի պահպանության նորմատիվա-իրավական ապահովման կատարելագործում, այդ թվում՝ էկոլոգիապես արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման

նպատակով տնտեսվարող սուբյեկտների տնտեսական խթանման միջոցների նախատեսում,

2) Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում,

3) Միջազգային ստանդարտները հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ազգային ստանդարտացման համակարգի զարգացումը,

4) Բնական միջավայրի, բնական էկոհամակարգերի, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանությունը,

5) Խախտված էկոհամակարգերի վերականգնումը,

6) Շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկատվության մատչելիության ապահովումը,

7) Միջազգային համագործակցության զարգացումը:

V. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

97.Հայաստանի Հանրապետության հողերի կայուն կառավարման հիմնախնդիրների լուծումն անհրաժեշտ է դիտարկել բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, պահպանության և վերարտադրության միասնական համատեքստում:

98.Առկա հիմնախնդիրների առաջարկվող լուծումները նպատակաուղղված են օրենսդրական և կառավարման համակարգի կատարելագործմանը, նոր տնտեսական մեխանիզմների ներդրմանը:

99.Օրենսդրական և կառավարման համակարգի բարելավման նպատակով անհրաժեշտ է.

1) մշակել և ներդնել ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողատարածքների վերականգնման նպատակով հատկացվող գումարների հավաքագրման, կուտակման և նպատակային օգտագործման նոր մեխանիզմներ՝ ամրագրելով դրանք Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքում և մի շարք ենթաօրենսդրական ակտերում,

2) ներդնել բնական ռեսուրսների (այդ թվում՝ հողերի) վրա ընդերքօգտագործման ոլորտի ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համակարգ, ապահովելով հողերի վրա տեխնածին ճնշումների դրսևորման վերաբերյալ համապարփակ տեղեկատվական հենքի ստեղծման օրենսդրական նախադրյալները,

3) նպաստել հողերի մոնիթորինգ իրականացնող պետական կառավարման մարմինների արդյունավետ համագործակցությանը, ինչը նպատակաուղղված կլինի դրանց կողմից ստացվող տեղեկատվությունների համադրելիությանը և միասնական տեղեկատվական ռեսուրսի ստեղծմանը:

100.Հողերի տնտեսական յուրացման արդյունավետության բարձրացման, բնական ռեսուրսիպահպանության նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել պրակտիկ դաշտի մի շարք նախաձեռնություններ, որոնք կվերաբերվեն մասնավորապես

ընդերքօգտագործման թափոններով զբաղեցված տարածքների կրճատմանը, խախտված հողատարածքների կենսաբանական վերականգնմանը, գյուղատնտեսական հողերի արդի մեթոդներով մշակմանը, արտաքին երկրաբանական երևույթների արդյունքում հողերի խախտման նվազեցմանը և այլն:

101.Առաջարկվող ծրագրային լուծումները ներկայացվում են հողերի օգտագործման կառավարման միջոցառումների 2018-2022թթ.-ի ծրագրում:

102.Կենսաբազմազանությանն առընչվող օրենսդրության և կառավարման համակարգի բարելավումը, մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հստակեցնել կենսաբանական ռեսուրսների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները և կատարելագործել կառավարման համակարգը.

2) ապահովել գենետիկական ռեսուրսների վերաբերյալ տվյալների մատչելիությունը: Հայաստանը լինելով գենետիկական ռեսուրսների առաջացման և պահպանման կենտրոններից մեկը, շահագրգռված է դրանց օգտագործման և շահույթի արդարացի բաշխման կայուն մեխանիզմների զարգացման, ազգային, ռեգիոնալ և գլոբալ մակարդակներով շահագրգիռ կողմերի իրավունքների և պարտականությունների որոշման համար:

103.Կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանության բարելավումը, խախտված բնակմիջավայրերի վերականգնումը, մասնավորապես՝

1) կենսաբազմազանության բնակմիջավայրերի պահպանությունը բարելավումը՝ նվազագույնի հասցնելով դրանց դեգրադացումը.

2) կենսաբազմազանության *in-situ* և *ex-situ* պահպանության բարելավումը:

104.Կենսաբազմազանության վրա ուղղակի ճնշման կրճատումը և կայուն օգտագործման խթանումը, մասնավորապես՝

1) կենսաբազմազանության վրա ուղղակի ճնշումների կրճատմանն ուղղված անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը,

2) կենսաբազմազանության պահպանության ու կայուն օգտագործման համար խրախուսման մեխանիզմների սահմանումը,

3) մշակովի բույսերի և ընտանի կենդանիների վայրի ցեղակիցների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու մշակութային տեսակետից արժեքավոր տեսակների գենետիկական բազմազանության պահպանության բարելավումը:

105.Կենսաբազմազանության կորստի հիմնական պատճառների վերացումը՝ միջճյուղային հարաբերությունների կարգավորման և բնակչության իրազեկության բարձրացման միջոցով, այդ թվում՝

1) տնտեսության միջճյուղային հարաբերություններում այնպիսի մեխանիզմների ներդնումը, որոնք կբացառեն բնական ռեսուրսների օգտագործման հետևանքով էկոլոգիական կայունության խախտումները,

2) պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը ուժեղացումը՝ բարձրացնելով կենսաբազմազանության հիմնախնդիրների մասին բնակչության իրազեկությունը:

106.Կենսաբազմազանության պահպանության և բնական ռեսուրսների կայուն օգտագործման ոլորտում գիտական հետազոտությունների, գիտելիքների կառավարման և ներուժի ստեղծման ակտիվացումը, ներառյալ՝

1) կենսաբազմազանության վիճակի և միտումների, դրա գնային արժեքի, ինչպես նաև կորստի հետևանքների հետ կապված գիտելիքներուի, գիտական բազաների և տեխնոլոգիաների կատարելագործումը,

2) կենսաբազմազանության ուսումնասիրման ոլորտում երիտասարդ մասնագետների պատրաստումը:

107.Հայաստանի բնակչության բարեկեցության և սոցիալ-տնտեսական զարգացման կապը կենսաբազմազանության պահպանության և կայուն կառավարման հետ, ներառյալ՝

1) իրականացնել լայնածավալ գործողություններ՝ փոփոխելով բնության, և հատկապես կենսառեսուրսների նկատմամբ երկրում ձևավորված սպառողական վերաբերմունքը՝բացառելով անվերահսկելի գործընթացները, ինչպես նաև ընդլայնելով միջոլորտային համագործակցությունը:

2)Քաղաքական որոշումների կայացման գործընթացը պետք է հիմնվի էկոհամակարգերի և դրանց առանցքային բաղադրամաս կազմող կենսաբազմազանության իրական դերի ու արժեքների վրա.

3)դեգրադացված էկոհամակարգերը պետք է վերականգնվեն շահավետ /քիչ ծախսատար/ միջոցներով կամ կոնսերվացվեն՝ բնականոն գործընթացների շնորհիվ դրանց բնական վիճակը վերականգնելու նպատակով.

4)բնակչության կենսամակարդակի աճը պետք է ապահովվի տնտեսական գործունեության մեջ վերականգնվող բնական ռեսուրսների օգտագործման այնպիսի մեթոդներով, որոնք բացառում են նրանց սպառումը ու երաշխավորում են վերականգնումը՝ ի շահ ապագա սերունդների.

5)կենսաբազմազանության հիմնախնդիրների վերաբերյալ որոշումները պետք է հիմնված լինեն լավագույն առկա գիտական տեղեկատվության վրա՝ օգտագործելով էկոհամակարգային մոտեցումը.

6)անհրաժեշտ է պրակտիկորեն ամրապնդել համագործակցությունը կառավարական կառույցների, քաղաքացիների, ձեռնարկատերերի ու շահագրգիռ այլ կողմերի միջև և դրանց հետևողական մասնակցությունը համապատասխան գործընթացներում.

7)կենսաբազմազանության վրա վնասակար մարդածին ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար պետք է մշակվեն և որոշումների ու ծրագրերի նախագծերի նախապատրաստման փուլում ներդրվեն միջոլորտային համագործակցության նոր արդյունավետ ձևերը:

108. Կենսառեսուրսների կայուն օգտագործում, մասնավորապես՝

1) առավել օգտագործվող բուսական և կենդանական տեսակների կայուն օգտագործման հնարավորությունների տնտեսական գնահատում, դրանց օգտագործման ենթակա չափաքանակների հաշվառում և կադաստրի ձևավորում.

2) էկոհամակարգային մոտեցմամբ անտառային ռեսուրսների որոշման մեթոդաբանության մշակում՝ հենվելով վերականգնվող կենսառեսուրների բնօգտագործման նորմավորման («պոպուլյացիոնկորի»մեթոդ), այդ թվում՝ անտառային էկոհամակարգում գույքագրման ու հաշվառման մեթոդաբանության սահմանում, ներառելով անտառային էկոհամակարգի վիճակը բնութագրող չափորոշիչներ (հողում և բուսականությունում), կուտակվող ու կուտակված օրգանական ածխածնի քանակը.

3) էկոհամակարգերի և տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների վրա կլիմայի փոփոխության և անապատացման (հատկապես՝ լեռնահանքային արդյունաբերությամբ պայմանավորված հողերի դեգրադացման) հնարավոր ազդեցության բացահայտում և դրա հետևանքների մեղմացման ուղղված գործողությունների ծրագրի մշակում և իրականացում.

4) բնապահպանական գլոբալ կոնվենցիաների միջև սիներգիկ (համագործուն) կապերի բացահայտում և համագործակցության եզրերի ընդլայնում.

5)օգտագործման համալիր թույլտվությունների տրամադրում և մոնիթորինգ.

6) համայնքային կառավարմամբ ԲՀՊՏ-ների ստեղծման փորձնական ծրագրերի մշակում և իրականացում:

109.Արտանետումների սահմանափակման նոր սկզբունքի ներդրումը պահանջում է. Օրենսդրության համապատասխան փոփոխություն, առաջին հերթին «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր օրենքի մշակում;

110.Օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը պետք է ուղղված լինեն օդի որակի բարելավման և բնակավայրերում մարդկանց առողջության համար առավել անվտանգ պայմանների ապահովմանը, մասնավորապես՝ անհրաժեշտ կլինի ներդնել այնպիսի արտադրական տեխնոլոգիաներ, որոնց կիրառումը կկանխարգելի, իսկ եթե հնարավոր չէ՝ կնվազեցնի մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունը, ինչպես նաև որոշակի արտադրանքների համար տեխնիկական նորմատիվների սահմանմանը, որոնք հիմնված կլինեն նոր տեխնոլոգիաներ վրա և արտանետման չափաքանակները/ թույլտվությունները կարտացոլեն այն տեխնոլոգիաները, որոնց կիրառելու դեպքում ձեռնարկությունը կարող է հասնել այդ տեխնիկական նորմին, ինչպես նաև դրա համար հստակ սահմանված ժամկետները և արտանետումների նվազեցման քանակությունները:

111. Նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակում և ներդրում,

112.Լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատվական բազայի ստեղծում,

113.Լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման և սպասվող արդյունքների համապատասխան հաշվարկների իրականացում, ներդրման իրական ժամկետների հստակեցում,

114.Խոշոր կազմակերպություններում լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրմանը նպաստող պայմանների (իրազեկվածություն, մրցակցության առավելություն նոր հնարավորություններ, տնտեսական կայուն շահ և այլն) ստեղծում,

115.Տեխնոլոգիաների ներդրման ընթացքում տնտեսական լծակների կիրառման հենքի ստեղծում, տեղեկատվության և փորձի փոխանակումը,

116.Ներկայումս Հայաստանում բացակայում է տեխնոլոգիաներ ընտրելու, փոխանցման անհրաժեշտությունը հիմնավորելու, արդյունավետությունը գնահատելու և ներդրման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու փորձը,

117.Ավտոտրանսպորտային արտանետումների հետ կապված օրենսդրությունը համապատասխանեցնել կամ մոտարկել ԵՄ և ԵԱՏՄ տարածքում գործող օրենսդրությանը,

118.Վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (անշարժ և շարժական աղբյուրներից) հաշվառման միասնական համակարգի ստեղծման համար իրավական հենքի և մեթոդական բազայի ստեղծում,

119. Կսահմանվեն ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափորոշիչներ, որոնք կնպաստեն ջրաէկոհամակարգի պահպանությանը և հավասարակշռության ապահովմանը,

120. Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում և արդյունավետ օգտագործում:

121. Հայաստանի Հանրապետությունում ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված իրավակարգավորման հստակեցում, շրջակա միջավայր արտանետվող կեղտաջրերի աղտոտման ծավալների նվազեցում,
122. Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործում ձկնաբույծների կողմից օգտագործվող ջրաքանակների վերաբերյալ առցանց տվյալների առկայություն,
123. Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային ավազանի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում:

VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

124. Սույն Ռազմավարությամբ առաջարկվող բնապահպանության ոլորտի զարգացմանը միտված լուծումների ֆինանսական գնահատականն առավել հստակ հնարավոր կլինի ապահովել այդ լուծումների իրագործմանն ուղղվող կոնկրետ ծրագրերի մշակման արդյունքում: Ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներ կարող են լինել մասնավոր հատվածի ներդրումները և միջազգային ֆինասնսական կառույցների և օրենքով չարգելված այլ աղբյուրները:

125. Սույն Ռազմավարության շրջանակներում ներկայացված լուծումները՝ շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման, համալիր պլանավորման, բնապահպանական պետական մոնիթորինգի և տեղեկատվական միասնական համակարգերի, բնապահպանական համալիր թույլտվությունների և լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրումը պահանջում է լրացուցիչ ֆինանսավորում, որի ծավալների գնահատման համար անհրաժեշտ են առավել մանրամասն ուսումնասիրություններ: Բնապահպանական համալիր թույլտվությունների և լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրումը նախատեսվում է իրականացնել տնտեսվարողների ֆինանսական միջոցներով:

VII. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

126. Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներն ու նոր քաղաքականության ձևավորումը կպահանջի նաև պետական կառավարման ապարատի օպտիմալացում՝ ի նկատի ունենալով գործադիր իշխանության հանրապետական մեկ մարմնի կողմից էկոհամակարգային մոտեցմամբ շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների համապարփակ կառավարման ապահովումը,

127.Սույն Ռազմավարությամբ ներկայացված հիմնախնդիրների առաջարկվող լուծումները կյանքի կոչելու բնապահպանության ոլորտի զարգացմանը միտված երկարաժամկետ ծրագրի նախագիծը նպատակահարմար է մշակել «Էկոլոգիական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից հետո, քանի որ հիշատակված օրենքով նախատեսվում է ոլորտի քաղաքականության ձևավորման նոր և առաջադեմ մոտեցումներ ու սկզբունքներ, ինչպես նաև օրենքներով չկարգավորված այլ հարաբերություններ: